


419

1909 № 1626

# ՀԱՅՏԵՐ ԿՐՈՒ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆ ՇԱՄԱ  
ՎՈՏՈԽԵԴՆԻ  
Պահօնա Խաչ  
ՍՍՀԲ



ՄԵ ԳՐԱԺԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

2(075)

Ս-15

С арм-к  
4201

2(075)

U-15

Յ Ա Ր Ա Ջ Ա Ր Ա Յ Ա

ԴԱՍԱՏԵՏՐ

ԿՐՈՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Բ. ՏՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ


ԺԳ. ՏՊ-

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԻՆՍՏԱՆՏԱ  
ՎՈՏՈԽՈՎԵԴԵՆԻ  
Ակադեմիա Նauk  
СССР

ՍԱՀԱԿ Ա. ՔՀ. ՍԱՀԱԿԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ  
ԷԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱԿԱՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑ. ՊՈԼԵԱ. 7  
1909

\* 2001



2010

ԴՐՈՂ

# ՂՏՏՏԱՄԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

S. S. ՄԱՏԹԵՈՍԻ Բ.

- Բ. Բ. Բ.

Սըբազնությոն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Ժայ-  
րագոյն Պատրիարքի Համագույկան Նախամեծար  
Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Աթոռ-  
ոյ Սըբոյ Կաթողիկէ Եջմիածնի:



361/6-66

Ապրիլի 3 Ա. Ռ Ա. Զ Ա. Ն Գ Ա Բ Տ Ա Վ Ա Ր Ա Յ Ա Ն

1908 թ. Հին-ուխտի աշակերտական ը. տպ. յա-  
ռաջաբանում մի երկու խօսքով բացատրել էի պատ-  
կերազարդ դասագրերի նշանակութիւնը: Այստեղ խոս-  
տացել էի միւս տարիները ևս պատկերազարդ հրատա-  
րակելու աւելի կատարելագործուած՝ թէ քանակի և  
թէ որակի կողմից:

Այսօր առիթ է ներկայանում երկրորդ տարին ևս  
պատկերազարդ գարձնել, որի համար ոչ մի միջոց  
չխնայուեց գիրքը մանուկներին գրաւիչ գարձնելու:  
Ձեռքի տակ ունիմ աստուածաշունչների եւրոպական  
ամենաընտիր հրատարակութիւններ, ուր զետեղուած  
են ականաւոր հեղինակների գլուխ գործոցները՝ գե-  
ղարուեստի պարծանքները: Այդ պատկերներից կօգ-  
տուենք մեր ապագայ հրատարակութեանց համար՝ թէ  
այս և թէ միւս տարիների դասագրերում: \*)

Ազգային կեանքին վերաբերեալ պատկերների  
համար օգտուել եմ հեղինակ անձանց կարծիքներից  
և ձեռք բերել հրատարակուած նիւթեր: Շնորհակալու-  
թեամբ պիտի յիշեմ ազգային կեանքին ծանօթ նկա-  
րիչ պարոն Եղիշէ Թաղէսոսեանին, որ պատրաստակամ  
գտնուեց առ այժմ մի քանի նոր պատկերներ պատ-  
րաստելու իրբև փորձ:

Մի անգամ ևս ցանկանք, որ հասակով և սրտով  
մանուկները սիրեն և այս հրատարակութիւնը:

Ս. ա. բն. Սահակեանց:

Ծղնէթ  
10 VII. 1909 թ.

\*) Առաջին տարուայ 1909 թ. հրատարակու-  
թիւնը կարող է մի ճաշակ տալ այդ կողմից:

50724-6. հ.

Մարթան լսեց, թէ Յիսուս գալիս է,  
գնաց նրա առաջ, իսկ Մարիամը տանը  
մնաց: Մարթան երբ տեսաւ Յի-  
սուսին, ասաց. «Տէր, եթէ այստեղ  
լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի, բայց  
ես հաւատացած եմ՝ հիմա էր եթէ  
Աստծուն խնդրես, որ իմ եղբօրը  
կենդանացնէ, քո խօսքին կլսէ: Յի-  
սուս ասաց նրան. «Քո եղբայրը յա-  
րութիւն կառնէ»: Մարթան ասաց.  
«Գիտեմ որ յարութիւն կառնէ վերջին  
դատաստանի ժամանակ, երբ բոլոր  
մարդիկն էլ յարութիւն կառնեն, բայց  
ես հիմա եմ ուզում: Յիսուս կրկնեց.  
«Ես եմ յարութիւն և կեանք տուողը,  
ով ինձ հաւատայ, եթէ մեռնի էր,  
դարձեալ կապրի. դու հաւատիւմ ես  
այս բանին»: Մարթան պատասխա-  
նեց. «Այս, Տէր, ես վաղուց եմ հա-  
ւատացել, որ դու ես Աստծու որդի  
Քրիստոսը»:

1. ՀԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

ԲԵԹԱՆԱցի Ղազարոսը հիւանդ էր:  
Այդ ժամանակ Յիսուսը Գալիլիայումն  
էր: Նրա երկու քոյրերը՝ Մարիամը և  
Մարթան մարդ ուղարկեցին Յիսուսի  
մօտ ասելու, թէ քո սիրելի Ղազարոսը  
հիւանդ է, արի և բժշկվը: Յիսուս, երբ  
այս բանը լսեց՝ ասաց. «Այն հիւան-  
դութիւնը մեռնելու համար չէ»: Բայց  
մինչև նրա գալը, Ղազարոսը մեռաւ:  
Յիսուս երբ լսեց, թէ Ղազարոսը  
հիւանդ է, ասաց իւր աշակերտնե-  
րին. «Եկէք գնանք Հրէաստան, մեր  
քարեկամ Ղազարոսը հիւանդ է»: Յի-  
սուս երբ ԲԵԹԱՆԻԱ եկաւ, արդէն  
չորս օր էր՝ որ թաղել էին Ղազարոսին:  
Ազգականներից շատերը Երուսաղէ-  
մից եկել էին Մարիամի և Մար-  
թայի մօտ՝ միմիթարելու համար: Երբ

Մարթան այս խօսքից ետոյ գնաց և թաքուն Մարիամին ասաց. «Վարդապետն եկել է, կանչում է քեզ»։ Մարիամը երբ այս խօսքերը լսեց, շտապով գնաց Յիսուսի առաջ։ Այն հրէաները, որոնք եկել էին սգւորներին մխիթարելու, երբ տեսան, որ Մարիամը գնաց, իրանք էլ նրա ետևից գնացին՝ կարծելով թէ գնում է գերեզմանի վրայ լաց լինելու։


Մարիամը, երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ դու այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»։ Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկող սգւորներին տեսաւ, որ լալիս էին, սիրտը լցուեց և ասաց. «Ո՞րտեղ էք թաղել ննջեցեալին»։ Նըրանք պատասխանեցին. «Տէր, արի և տես»։ Յիսուս գերեզմանը որ տեսաւ, արտասուեց։ Հրէաներն ասում էին. «Տեսնում էք ինչպէս է սիրում նրան»։

Մի քանիսն էլ ասում էին. «Միթէ սա չէր կարող այնպէս անել որ Ղազարու չմեռնէր»։

Յիսուս մօտեցաւ գերեզմանին և ասաց. «Վերառէք բերանի քարը»։ Մարթան ասաց. «Տէր, արդէն հոտած կրկնի, որովհետև չորս օրու ան թաղած է»։ Յիսուս ասաց. «Մարթա, չասացի՞ք քեզ, որ եթէ հաւատաս, բո եղբայրը յարութիւն կտռնէ»։

Քարը վեր առան։ Յիսուս դէպի երկինք նայեց, ազօթեց և ասաց. «Հայր, շնորհակալ եմ քեզնից. դու ինձ միշտ լսել ես. խնդրում եմ այս անգամ էլ լսես և Ղազարոսին յարութիւն տաս, որ այս ժողովուրդը հաւատայ, թէ դու ես ուղարկել ինձ»։ Այս ասաց և բարձր ձայնով կանչեց. «Ղազարոս, վեր կաց, դուրս եկ»։ Մեռելն իսկոյն դուրս եկաւ՝ ձեռներն ու ոտները պատանած, իսկ երեսը վար-

շամակով ծածկած։ Յիսուս ասաց։  
«Արձակեցէք կապերը և թողէք, որ



գնայ»։ Ղազարոսն իսկոյն վերկացաւ,  
սկսեց ման դալ։ Մարիամի հետ եկած  
հրէաներից շատերը տեսան Յիսուսի  
արած հրաշքը և հաւատացին նրան։

ԴԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԿԱՆԸ

ԿԵՆԴԱՆՈՎՑԵԱՆց բաշխող Քրիստոս

Ի ԲԵՇԱՆԻՒԱ ԵԿԱՏՈՐԵԱԼ այսօր,

ՔԱՐԵԿԱՄԻՆ ՂԱԶԱՐՈՒ

Պարզեցնէ զկենդանովցին։

Ամենին կեանք բաշխող Քրիստոսն այսօր  
ԲԵՇԱՆԻՒԱ ԵԿԱՏՈՐԵԱԼ Ի ԲԵՇԱՆԻՒԱ ՂԱԶԱՐՈՍԻՆ  
յարութիւն տուեց։

## 2. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Ղազարոսի յարութիւնը տեսնող  
հրէաներից մի քանիսը դարձան Երու-  
սաղէմ և պատմեցին իրանց տեսածը  
Յիսուսի թշնամի փարիսեցիներին և  
քահանաներին։ Մրանք շատ վախեցան,  
իսկոյն ժողով արին և ասացին. «Այն  
մարդը շատ հրաշքներ է անում, եթէ  
այդպէս թողնենք, ամենքն էլ նրան  
կհաւատան, էլ մեզ մօտ ոչ ոք չիգայ»։  
Նրանցից մինը՝ որի անունը Կայիափա  
էր, ասաց. «Դուք ոչինչ չգիտէք և հե-

ոռւն չէք էլ մտածում. եթէ նա այս-  
պէս քարոզէ, ամենքն էլ նրան կլսեն  
և կմոլորուեն—ամենից լաւն է նրան  
սպանենք»։ Ուստի քահանայապետ-  
ները և փարիսեցիները ժողովում ո-  
րոշեցին նրան սպանել։ Այս պատճա-  
ռով հրաման ուղարկեցին ամեն կողմ,  
որ ով Յուսուսի տեղն իմանայ, իմաց  
տայ իրանց, որ բռնեն և սպանեն։

3. Տ Ա Ս Ն Կ Ո Յ Ս Ա Ե Ր

Մի անգամ հարսանիք կար։ Տասը  
կոյս աղջիկ իրանց լապտերները վեր  
առան և գնացին փեսայի առաջ։ Նրան-  
ցից հինգը յիմար, այսինքն անզգոյշ-  
էին, իսկ հինգը՝ իմաստուն, այսինքն  
զգոյշ էին։ Յիմարները մոռացան ի-  
րանց լապտերների հետ աւելորդ ձէթ-  
վերցնել, իսկ իմաստունները վերցրին։  
Փեսան ուշացաւ և ամենի քունը տա-  
րաւ փողոցում։

Կէս գիշերին ձայն լսուեց թէ  
փեսան գալիս է։ Կոյսերը վերկացան  
և լապտերները պատրաստեցին։ Յի-  
մարների լապտերների մէջ ձէթ չկար,  
քիչ էր մնում հանգչի, դիմեցին իմաս-  
տուններին և ասացին։ «Զեր ձէթիցը  
մի քիչ էլ մեզ տուէք, մեր լապտեր-  
ները հանգչում են։ Իմաստուննե-  
րը պատասխանեցին։ «Եթէ ձեզ ձէթ  
տանք, մեզ բաւական չի լինի, գնա-  
ցէք ծախողների մօտ և ձեզ համար  
ձէթ գնեցէք»։

Երբ յիմարները ձէթ առնելու գը-  
նացին՝ փեսան եկաւ։ Իմաստուն կոյ-  
սերը նրա հետ մտան հարսանքատունը  
և դուռը փակուեց։ Ետոյ անպատճաստ  
կոյսերն էլ եկան և ասացին։ «Տէր,  
բաց արա դուռը»։ Փեսան պատաս-  
խանեց և ասաց. «Ես ձեզ չեմ ճանա-  
չում, հեռացէք» և դուռը բաց շարաւ։



ՏԱՄՆԿՈՅՍԵՐԻ ՇԱՐԱԿԱՆԸ  
ԹՄԱՍԹՈՒՆ ԿՈՄԱՆՆՆ  
ՓԱԹԼԱՍԹԵԱԼ ԻՎԼ ՂԱՊԹԵՐԻԱԳ,  
ԵԼԻՆ ԸՆԴ ԱՊԱՑ ԵՐԼՆԱՄՈՐ ՎԻԵՍԱՅԻՆ  
ՎԱՊՆԵԱԼ ՂԱՊԹԵՐՈՑ:

Իմաստուն կոյսերը լապտերների համար  
իւղ վեր առան և վասած լապտերներով գուրս  
եկան վիեսայի առաջ՝

#### 4. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Յարութիւնից ետոյ քառասուն օր  
էլի մնաց երկրիս վրայ—նա երբեմն  
գալիս էր իւր աշակերտների մօտ:  
Քառասներորդ օրը Յիսուս առաքեալ-  
ների հետ Զիթենեաց լեառը բարձրա-  
ցաւ. այնտեղ պատուէր տուեց նը-  
րանց և ասաց. «Երուսաղէմից չհեռա-  
նաք, այլ սպասեցէր, մինչև ես հայր  
Աստծուն կիմնդրեմ, որ Սուրբ Հոգին  
երկնքից ուղարկէ։ Դուք զօրութիւն  
կստանաք, ետոյ կերթաք, կքարոզէք

Երուսաղէմում, Հրէաստանում և միւս  
երկրներում ու ամեն տեղ կվկայէք իս  
մասին։ Ուրեմն գնացէք և բոլոր ազ-



գերին քարողեցէք Հօր, Որդու և Սուրբ  
Հոգու մասին։ Սովորեցը նրանց, որ  
պահեն այն ամենը, ինչ որ ես ձեզ

պատուիրեցի։ Ով կհաւատայ և կմկր-  
տուի, նա կազատուի, երջանիկ կլինի,  
իսկ ով չի հաւատայ, կպատժուի։

Երբ այս ասաց, բարձրացրեց եր-  
կու ձեռները և օրհնեց նրանց։ Օրհ-  
նելու ժամանակ բաժանուեց նրան-  
ցից և երկինք բարձրացաւ։ Խոկոյն մի  
ամպ եկաւ, ծածկեց նրան, այնպէս  
որ աշակերտներն այլ ևս չտեսան Յի-  
սուսին։ Նրանք երկրպագեցին. մեծ  
ուրախութիւնով ետ դարձան Երու-  
սաղէմ և ամեն օր տաճարում օրհ-  
նում էին Աստծուն և սպասում էին  
Սուրբ Հոգուն։

Համբարձման աօնը կատարում ենք Զատ-  
կից 40 օր ետոյ։

### 5. Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ւ Տ

Զիթենեաց լեռնից առաքեալները  
դարձան Երուսաղէմ և միասին էին

ապրում։ Տասն օրից ետոյ, Երբ նը-  
րանք ժողոված էին վերնատանը, յան-



կարծ Երկնքից մի ձայն լսուեց՝ սաս-  
տիկ փշող քամու նման և լցրեց այն

տունը։ Ետոյ առանձին-առանձին կրա-  
կի նման լեզուներ երևացին։ այդ լե-  
զուներից ամեն մինը իջաւ նրանցից  
իւրաքանչիւրի վրայ—նրանք Սուրբ  
Հոգւով լցուեցան և սկսան զանազան  
լեզուներով խօսել։

Բացի Երուսաղէմացիներից՝ քա-  
ղաքում բնակւում էին շատ աստուա-  
ծապաշտ հրէաներ, որոնք ուխտ էին  
եկել աշխարհի ամեն կողմերից։ Երբ  
Երկնքից իջնող ձայնը լսուեց, ժողո-  
վուրդը հաւաքուեց մէկ տեղ։ Ամեն-  
քը զարմացած լսում էին, թէ ինչ-  
պէս առաքեալները ուրիշ ուրիշ լե-  
զուներով էին խօսում։ Ոչ ոք չէր հա-  
ւատում իւր տեսածին ու լսածին,  
սրա համար էլ մինը միւսին հարցնում  
էր. «Չի՞ որ այս խօսողները բոլորն էլ  
անուսում գալիլիացիներ են, տեսէք  
ինչպէս մեր լեզուներով խօսում և  
պատմում են Աստծու մեծամեծ



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԵՎԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
1932

— 18 —

գործերը—այս ինչ պիտի լինի»։ Իսկ  
ոմանք էլ ծաղրում էին և ասում։ «Ե-  
րեկի հարբած են»։



Այն ժամանակ Պետրոսը տեղից

— 19 —

վեր կտցաւ և սկսեց այսպէս խօսել։  
«Ով հրէաստանցիներ և Երուսաղէմում  
բնակուողներ, լաւ լսեցէք՝ ինչ որ ձեզ  
քարոզելու եմ։ Սրանք հարբած չեն,  
ինչպէս կարծում էք, որովհետև դեռ  
առաւօտեան ժամի ինն է։ Լսեցէք, ով  
իսրայէլացիներ, ես ասեմ ձեզ, թէ այս  
ինչ բան է—Աստուած Յիսուս Նա-  
զովքեցուն աշխարհ ուղարկեց։ Նա ե-  
կաւ և ձեր մէջ հրաշքներ գործեց։  
Թէև դուք նրան խաչեցիք, բայց Աս-  
տուած երեք օրից ետոյ յարութիւն  
տուեց նրան։ Սրանք ինչ որ անում  
են, ձեր խաչած Քրիստոսի զօրութիւ-  
նովն է»։

Երբ այս քարոզը լսեց Ժողովուրդը,  
զզջաց իւր սրտում։ Շատերը գալիս  
էին Պետրոսի, միւս առաքեալների մօտ  
և հարցնում։ «Ի՞նչ անենք»։ Պետրոսն  
էլ ասում էր նրանց։ «Ապաշխարեցէք  
և մկրտուեցէք Յիսուս Քրիստոսի ա-

նունով։ Ով կմկրտուի, Սուրբ Հոգու  
շնորհը կընդունի։ Այն օրը երեք հա-  
զար մարդ հաւատաց Պետրոսի խօս-  
քերին և մկրտուեց։

Հոգեգալստեան տօնը կատարում ենք Զատ-  
կից 50 օր ետոյ։

#### ՅՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Այսօր երկնայինքն ուրախացան  
Ընդ երկրատրաց նորոգումն,  
Քանզի նորոգողն էից հոգին էջի սովոր վեր-  
նատունն,

Որով նորոգեցան դասք առաքելոցն։

Այսօր հրեշտակներն ուրախացան, որ երկ-  
րիս վրայ բնակուող մարդիկը նորոգուեցան, ո-  
րովինետև ամենին նորոգող Սուրբ Հոգին իջաւ  
վերնատուն և առաքեալների դասը նորոգեց։

#### 6. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

Յիսուս Խաչի վրայից ասել էր  
Յովհաննէս առաքեալին, որ իւր մօրը

խնամք տանի։ Այն օրից սկսած Մա-  
րիամը մինչև իւր մահը 16 տարի  
շարունակ Յովհաննէսի մօտ էր ապ-  
րում։

Երբ սուրբ կոյս Մարիամը մե-  
ռաւ, առաքեալները թաղեցին նրան  
Գեթսեմանի պարտէզում, որտեղ Յու-  
դան Յիսուսին զինուորների ձեռն էր  
մատնել։ Աստուածածնի մահուան ժա-  
մանակ բոլոր առաքեալները Երու-  
սաղէմումն էին՝ բացի Բարթոլդիմէո-  
սից, որ հեռի երկիր էր գնացել քա-  
րոզելու։ Երբ Բարթոլդիմէոսը Երու-  
սաղէմ դարձաւ և իմացաւ Տիրամօր  
մահը, խիստ տիսրեց և ցանկացաւ  
տեսնել նրա գերեզմանը։ Առաքեալ-  
ները նրան Գեթսեմանի պարտէզը  
տարան, բայց որքան զարմացան, երբ  
գերեզմանը բաց արին և ոչինչ չգտան,  
որովհետև Յիսուս Քրիստոս հրեշտակ-  
ների ձեռով իւր մօր մարմինը եր-

կինք էր տարել, այսինքն վերափոշ  
խել էր:

Բարթուղիմէոս առաքեալը աւելի  
ևս տիրեց, որ չկարողացաւ ոչ Տի-  
րամօրը տեսնել և ոչ նրա մարմինը:  
Միւս առաքեալները Բարթուղիմէո-  
սին միմիթարելու համար՝ Աստուա-  
ծածնի պատկերն ընծայեցին նրան:  
Բարթուղիմէոս առաքեալը Հայաս-  
տան եկաւ քարոզելու, Տիգրիս գե-  
տի ավին մի վանք շինեց և այս պատ-  
կերն այնտեղ դրաւ:

Մեր Եկեղեցին տօնում է այդ օրը:  
Երբ հրեշտակները սուրբ կոյս Մա-  
րիամի մարմինը երկինք վերափոխե-  
ցին և դրա համար էլ տօնը կոչում  
է վերափոխումն:

Այդ օրը Եկեղեցի ենք գնում և  
Աստուածածնից խնդրում, որ քարե-  
խօս լինի իւր որդի Յիսուս Քրիստո-  
սի մօտ՝ մեր աղօթքը լսելու, դրա

համար էլ Եկեղեցում երգում ենք—

«Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս  
Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մա-  
տո զաղաշանս մեր որդույ քո եւ Աստուծոյ  
մերոյ»

Ով գու վառաւորուած և օրհնուած միշտ  
սուրբ կոյս՝ Քրիստոսի մայր՝ Մարիամ Աստու-  
ծածին, մեր աղօթքը հասցըռու քո Որդուն՝ մեր  
Աստծուն:

Վերափոխման տօնը ամառն է լինում: Այդ  
օրը Եկեղեցում խաղող են օրհնում:

ՍՈՒՐԲԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՇԱՐԱԿԱՆԸ

Անկանիմք առաջի քո Աստուածածին  
եւ աղաչեմք զանարատ զկոյսի:

Քեզ Երկրպագութիւն ենք տալիս, ով Աս-  
տուածածին և աղաչում ենք քեզ՝ անարատ կուսիդ:

Բարեխօսնա վասն անձանց մերոց  
եւ աղաչեա զՄիածին որդին:

Բարեխօսիր մեզ համար և աղաչիր Միա-  
ծին որդուն:

Փրկել զմեզ ի փողօվթենէ  
Եւ յամենայն վտանգից մերոց։

Որ ազատէ մեզ փողձութիւնից և ամեն տեսակ վտանգներից։

7. Ա.ԲԳԱՐ ԹԱԳԱԻՈՐԸ ԴԵՍՊՈՆՆԵՐ Է  
ՈՒՂԱՐԿՈՒՄ ՅԻՍՈՒՄՔ ՄՕՏ

Հայոց Աբգար թագաւորն ապրում  
էր Եղեսիա քաղաքում—սա եօթը տարի  
շարունակ բորոտութիւնով հիւանդէր։ Ամեն տեսակ դեղեր գործ էր դրել,  
բայց չէր առողջացել։ Աբգարը լսեց,  
որ Հրէաստանում Յիսուս առանց դեղի բժշկում է ամեն տեսակ հիւանդութիւններ, այդ պատճառով նամակ գրեց և դեսպանների ձեռով ուղարկեց, որ գայ և իրան բժշկէ։ Ահա Աբգարի գրած նամակը. «Ես լսել եմ, որ դու առանց դեղի բժշկում ես հիւանդներին—կոյրերի աչքը բաց ես անում։

Խուլերին լսողութիւն։ կաղերին ոտնես տալիս. բորոտներին սրբում ես. ամեն տեսակ հիւանդութիւն բժշկում ես և մինչև անգամ մեռելներին յարութիւն ես տալիս։ Երբ ես այս ամենը լսեցի, ինքս ինձ ասացի, որ դու կամ երկնքից իջած Աստուած ես կամ Աստծու որդի։ Լսեցի նոյնպէս, որ հրէաները քեզ նեղացնում են։ Աղաչում եմ, արի և բժշկիր ինձ։ Ես մի փոքրիկ քաղաք ունեմ, երկուսիս էլ բաւական է. քեզ այստեղ ոչ ոք չի նեղացնի։ Նամակն ուղարկեց դեսպանների ձեռով և պատուիրեց, որ եթէ Յիսուս չգայ, պատկերը քաշեն և իրան բերեն։ Այս բանի համար մի նկարիչ էլ ուղարկեց նրանց հետ։

8. ԴԵՍՊՈՆՆԵՐԻ ԲԵՐԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Դեսպանները գնացին Երուսաղէմ և նամակը Յիսուսին տուին։ Նա չկա-

բողացաւ գալ և մեր Աբգար թագաւ  
ողին այս պատասխանը գրեց. «Երաւ  
նի նրան՝ ով ինձ չի տեսել, բայց  
հաւատում է:  
Գրում ես, որ  
քեզմօտ գամ,  
չեմ կարող:  
Ես չեմ եկել  
հանգիստապ-  
րելու, այլ  
չարչարուե-  
լու և խաչւե-  
լու: Երբ այս  
բոլորը վեր-  
ջացնեմ, հայր  
Աստծու մօտ  
պիտի գնամ:



Իսկ իմ աշակերտներից մինին կուղար-  
կեմ, որ գայ և քեզ բժշկէ:

Երբ նկարիչը տեսաւ, որ Յիսուս  
չէ գալիս, սկսէց նրա պատկերը նկա-

րել բայց ինչքան աշխատում էր, չէր  
կարողանում: Երբ Յիսուս նկատեց,  
նկարչին իւր մօտ կանչեց, մի կտոր  
մաքուր կտաւ պահանջեց երեսին ծած-  
կեց և նրա վրայ նկարուեց իւր պատ-  
կերը: Ետոյ նկարչին տուեց, որ տա-  
նի Աբգարին: Այս պատկերը կոչւում է  
դաստանկ կամ անծնուազործ պատկեր:

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱՀՈՐԻՉՆԵՐ  
ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԹՈՒՂԻՄԵՈՍ

Յիսուս բացի 12 առաքեալներից  
72 աշակերտ էլ ունէր:

Համբարձումից ետոյ այդ աշա-  
կերտներից մինը՝ Թաղէոս անունով,  
Հայաստան եկաւ Աբգարի մօտ: Երբ  
սա պալատը մտաւ, թագաւորը երկըր-  
պագութիւն տուեց նրան: Թաղէոսը  
քարոզեց թագաւորին, բոլոր քաղա-  
քացիներին և ասաց, որ Քրիստոսին  
հաւատան ու նրա ասածները կա-



Ե. Թ.

տարեն։ Թաղէոսը Աբգարի գլխին ձեռք  
դրեց, օրհնեց և բժշկեց, նոյնպէս Ե-  
ղեսիա քաղաքի բոլոր հիւանդներին։  
Այս բանը որ տեսան քաղաքացինե-  
րը, հաւատացին Քրիստոսին, մկըր-  
տուեցան՝ քրիստոնեայ դարձան։

Սուրբ Թաղէոսը երկար ժամա-  
նակ չը մնաց այնտեղ, նա առաքեալ-  
ների նման պիտի գնար զանազան տե-  
ղեր և քարոզէր, այս պատճառով թա-  
գաւորի թագ շինող Աղդէին եպիս-  
կոպոս ձեռնադրեց, հովիւ նշանակեց  
այս նոր քրիստոնեաների վրայ, որ  
նորից կռապաշտ չդառնան։ Թաղէ-  
ոսը Աբգարից հրաման առաւ և գնաց  
Վերին Հայաստան՝ թագաւորի քրոջ-  
որդի Սանատրուկի մօտ, քարոզեց նը-  
րան և նրա մարդկանց ու ամենին էլ  
մկրտեց։ Սանատրուկի աղջիկ Սան-  
դուխտին ևս մկրտեց։

Սանատրուկը շատ կարճ ժամա-

նակ քրիստոնեայ մնաց—հէնց Աբ-  
գարի մահից ետոյ՝ ուրացաւ քրիս-  
տոնէութիւնը, դարձաւ կռապաշտ և  
սկսեց քրիստոնեաներին նահատակել:  
իւր Ամնդուխտ աղջկան էլ ստիպեց,



որ ուրանայ քրիստոնէութիւնը, բայց  
նա պատասխանեց, որ կմեռնի, բայց  
կուռք չի պաշտի: Արա համար հայրը  
իւր աղջկան նահատակել տուեց: Բայց

սրանով չբաւականացաւ—որովհետև  
Սանդուխտ կոյսը սուրբ Թագէոսից  
էր ուսել քրիստոնէութիւնը, այս պատ-  
ճառով ուսուցչին էլ նահատակել տը-  
ւեց Սրտազ գաւառում:

Այսպէս թէ ուսուցիչը և թէ ա-  
շակերտուհին լաւ համարեցին մեռ-  
նել՝ քան թէ ուրանալ Քրիստոսին  
և կուռք պաշտել:



Սուրբ Թաղէոսի մահից տասն և  
հինգ տարի ետոյ՝ Բարթոլդիմէոս ա-  
ռաքեալը ևս Հայաստան եկաւ, որ  
ըրիստոնէութիւնը քարոզէ։ Սա բե-  
րեց իւր հետ առաքեալներից ստացած  
Մարիամ կուսի պատկերը. Տիգրիս  
գետի ափին մի վանք շինեց՝ Աստուա-  
ծածին անունով և այդ պատկերն  
այնտեղ դրաւ։

Սուրբ Թաղէոս և Բարթոլդիմէոս  
առաջին անգամ եկան մեր երկիրը  
ըրիստոնէութիւն քարոզելու և լու-  
սաւորելու հայերին, սրա համար  
էլ նրանց անուանում ենք Հայաս-  
տանի առաջին կամ նախկին լու-  
սաւորիչներ։ Եւ որովհետև նրանք  
այդպիսի գեղեցիկ գործ են կատարել  
մեզ համար, մենք էլ ամեն տարի  
տօն ենք կատարում եկեղեցում ու  
յիշում նրանց անունները։ Այդ օրը  
երգում ենք—

ՇԱՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՅ

Հայրատունկ այգոյն հրեղէն պարհապք եւ  
քարձր աշտարակք, ոսկեղէն քամակք եւ ժիր  
մատուակք Հայաստանեաց, հարք հոգետորք, Բար-  
թուլիմէոս եւ Թաղէոս, քարեխօս լիրուք առ Տէր  
վասն անձանց մերոց։

Դուք հօր տնկած այգու հրեղէն պարիսապ-  
ներ, բարձր աշտարակներ, ոսկեղէն քամակ-  
ներ և ժիր մատուակներ էք, ով հայաստան-  
ցիներիս հոգևոր հայրեր՝ Թաղէոս և Բարթու-  
լիմէոս, քարեխօս եղէք Տիգրջ առաջ մեղ  
համար։

Թագաւոր երկնաւոր,

Զեկեղեցի քո անշարժ պահեա՝ յաղատայ

Եւ զերկպազուա անուանդ քում ասաւ

Պահեա ի խաղաղութեան։

Ով երկնաւոր թագաւոր Յիսուս, քո եկե-  
ղեցին անշարժ պահիր, քո անուան երկըր-  
պագութիւն տուողներին Խաղաղութեան մէջ  
պահիր։ Այս պատճեան ամ քամակք առ  
այս ազգոր վշարադմ չմալալլ Յամ

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՄ  
Մ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ

ԱՆԱԿԲ ԳԱԼԻՍ Է ՀԱՅԱՍՏԱՆ

Պարսից Արտաշիր թագաւորը թշշ-  
նամացել էր Հայոց Խոսրով թագա-  
ւորի հետ։ Մի օր նա իւր պալատա-  
կանների հետ այսպէս խօսեց—ով հա-  
յոց Խոսրով թագաւորին կսպանի, ինչ  
պարզե կամենայ, կստանայ ինձանից։  
Իշխաններից մինը՝ Անակ անունով՝  
Խոստացաւ Արտաշիր ցանկութիւնը  
կատարել։ Սա վերցրեց իւր ընտանի-  
քը, հասաւ Հայաստանի սահմանը և  
այնպէս ցոյց տուեց՝ որպէս թէ պար-  
սից թագաւորն իրան հալածում է  
և մեր թագաւորից պաշտպանութիւն  
խնդրեց։ Խոսրովն Անակին սիրով ըն-  
դունեց։ Նա այնպէս էր կարծում, թէ  
փախստականը շատ տեղեկութիւն-  
ներ կյայտնէ Արտաշիր զօրքի և նրա


բոլոր գործերի մասին, այս պատճա-  
ռով Անակին հէնց իւր պալատում  
տեղ տուեց։ Այնուհետև Անակը միայն  
նրա մասին էր մտածում, թէ ինչպէս  
սպանէ մեր թագաւորին։

11. ԽՈՍՐՈՎԻ ՄԱՀԸ

Մի օր Խոսրովը որսի գնաց իւր  
պալատականների հետ։ Անակին էլ  
հետն առաւ։ Որսի ժամանակ Անակը  
Խոսրովին փոքր ինչ հեռու տարաւ  
որպէս թէ ծածուկ բան ունի ասե-  
լու։ Այստեղ սրով խփեց թագաւո-  
րին, իսկ ինը ձի նստեց և սկսեց  
փախչել։ Մարդիկ ետևիցն ընկան։ Ա-  
նակը փախաւ, ձգեց իրան Երասխ գե-  
տը և խեղղուեց։ Խոսրովը դեռ չէր  
մեռել, որ հրամայեց Անակի ընտա-  
նիքը կոտորել։ Թագաւորի հրամանը

Կատարուեց—նրա ընտանիքը սրի անցրին։ Անակի որդկերանցից միայնմանուկ Գրիգորին Եւթող անունով մէկը՝ Սոփիա Դայեակի հետ փախցրեց և տարաւկեսարիա քաղաքը։ Երբ Արտաշիրը Պարսկաստանում իմացաւ, թէ

Անակը սպանել է Խոսրովին, մեծ զօրք առաւ և եկաւ Հայաստան, որ Խոսրովի տունը ջնջէ։ Հայերը չկարողացան պարսիկների դէմ կռուել։ Արտաշիրը մտաւ մեր Երկիրը, տիրեց Հայաստանին և կոտորեց Խոս-



րովի ընտանիքը։ Հայ իշխանները կարողացան Խոսրովի երկու որդւոց ազատել—Տրդատին փախցրին Հոռվմքաղաքը, իսկ սրա քոյլ Խոսրովաղը լուտին տարան Անի ամրոցը։

12. Ա. ԳՐԻԳՈՐԸ ԿԵՍԱՐԻԱՅՈՒՄ

Սոփիան Գրիգորին պահում էր Կեսարիայում։ Այնտեղ մանկանը մըկրտեցին և անուանեցին Գրիգոր։ Փոքրինչ որ մեծացաւ, նրան ուսումնարան ուղարկեց, ուր սովորում էր յունարէն և ասորերէն։ Սոփիան ինքը քրիստոնեայ էր։ Փոքրիկ Գրիգորին առվորցը եց, ինչ որ հարկաւոր էրքրիստոնէական կրօնի համար։ Երբ Գրիգորը չափահաս դարձաւ, ամուսնացաւ Մարիամ անունով մի աղջկայ հետ և նրանից երկու որդի ունեցաւ՝ Վրթաննէս և Արիստակէս։

Գրիգորին պատմեցին, որ իւր հայր  
Անակը սպանել է Խոսրով թագաւո-  
րին, որի որդի Տրդատը Հռովմումն է,  
սրա համար էլ կամեցաւ գնալ այն  
քաղաքը, որ իւր մեղաւոր հօր փո-  
խարէն Տրդատի մօտ ծառայութիւն  
անէ և սրանով հօր մեղքերը փոքր  
ինչ թեթևացնէ։ Այս պատճառով սի-  
րով բաժանուեց ամուսնուց—Մարիա-  
մը կուսանոց մտաւ, իսկ ինքը գնաց  
Հռովմ Տրդատի մօտ։


### 13. ՏՐԴԱՏԸ ՀՌՈՎՄՈՒՄ

Խոսրովի որդի Տրդատն էլ Հռով-  
մումն էր մեծանում Դիոկղետիանոս  
կայսրի մօտ։ Երբ հասակն առաւ, զի-  
նուորական ծառայութեան մէջ մը-  
տաւ։ Տրդատը մեծ ոյժ ունէր, լաւ  
զիտէր ձի նստել և զէնք դործածել։  
Մի անգամ ձեռով բռնեց եղան եղ-

ջիւրը և քաշեց, հանեց։ Մի անգամ  
էլ ընկերի հետ կառք էին քշում։ ըն-  
կերը դիտմամբ Տրդատին կառքից  
վայր ձգեց, բայց սա վազեց և կառքի  
ետևից այսպէս բռնեց, որ ձիերն էլ  
չկարողացան առաջ գնալ։ Մի անգամ  
էլ Դիոկղետիանոս կայսրը պատերազմ  
ունէր։ Թշնամու թագաւորը մարդ  
ուզարկեց և այսպէս էր ասում—փո-  
խանակ զօրքով մէկ մէկու հետ կը-  
ուռելու և իգուր տեղը մարդիկ սպա-  
նելու, արի ես ու դու մենամարտենք։  
Եթէ ես յաղթեմ, դուք ամենքդ ինձ  
ծառայ եղէք, իսկ եթէ դու յաղթես,  
մենք քեզ հարկ տանք։

Դիոկղետիանոսը խիստ վախեցաւ  
և չգիտէր, թէ ինչ անէ։ Կայսրի զօ-  
րավարներից մէկն ասեց. «Տէր թա-  
գաւոր, ամենևին մի մտածիր այդ  
մասին, հայոց թագաւորի որդի Տրդ-  
դատը, որ իմ գնդում ծառայում է,

կարող է քեզ ազատել» և Տրդատի քաջութեան մասին շատ բաներ պատմեց։ Դիոկղետիանոսն իսկոյն Տրդատին իւր մօտ կանչել տուեց. թագաւորական զգեստ հազցըրեց. թագաւորի նշաններով զարդարեց և ամեն տեղ յայտնեց, թէ նա կայսրն ինքն է։ Ետոյ թշնամու մօտ մարդ ուղարկեց և յայտնեց, որ վաղը մենամարտելու են։ Երկրորդ օրը Տրդատը ձի նստեց, քշեց թշնամու կողմը, յարձակուեց նրա վրայ, բռնեց և Դիոկղետիանոսի մօտ բերեց։ Կայսը չափից դուրս ուրախացաւ և երբ իմացաւ, որ իրան ազատողը հայոց թագաւոր Խոսրովի որդին է, թագաւորական զգեստ հազցըրեց. գլխին թագ դրեց. հոռվմէական զօրք տուեց, որ գնայ Հայաստան, պարսիկներին դուրս անէ և իւր հօր փոխարէն թագաւորէ։ Տրդատը հասաւ կեսարիա քաղաքը.



Տրդատ


14. Ս. ԳՐԻԳՈՐԻՆ ԶԳՈՒՄ ԵՆ ԽՈՐՎԻ-  
ՐԱՊԸԼ

Տրդատը մտաւ Հայաստան և հասաւ Երիզա քաղաքը։ Այստեղ էր կռապաշտ հայերի աստուածունի Անահի-

Գրիգորը նրա հետն էր։ Հայ նախարարները, երբ իմացան, որ իրանց թագաւորի որդին զօրքով գալիս է, եկան, միացան նրա հետ, որ պարսիկներին դուրս անեն մեր երկրից։

տի արձանը, որին մեր պապերը պաշտում էին: Թագաւորը Անահտին զոհ բերեց և խնդրեց, որ յաջողութիւն տայ իր գործին: Թէ նա և թէ բոլոր զինուորները երկրպագութիւն էին տալիս և ծաղիկներից պսակ էին դընում կուռքի առաջ: Հերթը Գրիգորին հասաւ: Տրդատը հրամայեց, որ նա էլ Անահտին աղօթէ: Բայց Գրիգորը քրիստոնեայ էր, չուզեց կուռքին երկրպագութիւն տալ: Տրդատը բարկացաւ Գրիգորի վրայ և հրամայեց, որ անպատճառ Անահտի առաջ աղօթէ: Գրիգորը չուզեց: Այն ժամանակ հայոց Տաճատ իշխանը թագաւորին պատմեց, թէ նա իւր հօրը սպանող Անակի որդին է: Տրդատն աւելի ևս բարկացաւ, հրամայեց Գրիգորին խիստ պատիժներ տալ— պատուիրեց, որ տանեն Արտաշատ քաղաքի Խոր-Վիրապ՝ ստորերկրեայ

բանտը ձգեն, որպէսզի սովոր մեռնէ: Այս բանտը լի էր բազմաթիւ օձերով և կարիճներով: Գրիգորը 15 տարի մնաց այնտեղ: Մի քըիստոնեայ



Խոր-Վիրապ

կին Աստծու հրամանով ամեն օր մի մի հաց էր ձգում բանտը, որ Գրիգորը ուտի և չմեռնի:

Տրդատը երբ մտաւ Հայաստան, դուրս արեց պարսիկներին և ինքն սկսեց կառավարել: Թագաւորը կուտ-

պաշտ էր, դրա համար էլ հրաման  
հանեց, որ իւր տէրութեան մէջ կուռ-  
քերին երկրպագութիւն տան, իսկ  
քրիստոնեաներին սպանեն:

15. ՀՌԻՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ  
ԿՈՅՍԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Դիոկետիանոս կայսը կամենում  
էր ամուսնանալ: Ամեն կողմ պատ-  
կերահաններ ուղարկեց, որ թագուհի  
լինելու արժանի գեղեցիկ ազջիկներ  
գտնեն. նրանց պատկերները նկարեն  
և իրեն բերեն: Այս պատկերահաննե-  
րից մի քանիսն էլ Հռոմ քաղաքի մօտ  
գտնուող կուսանոցը գնացին: Այս-  
տեղ մի գեղեցիկ կոյս կար՝ անունը  
Հռիփսիմէ, սրա պատկերն ուժով քա-  
շեցին և կայսրին տարան: Կայսը հա-  
ւանեց Հռիփսիմէին և ուզում էր նը-  
րան թագուհի դարձնել:



Վ. Ս.

Հռիփսիմէ

Երբ այս բանն  
իմացաւ կուսա-  
նոցի մայրապետ  
Գայանէն, ըոլոր  
կոյսերին հաւա-  
քեց և Հռիփսիմէի  
հետ միասին փա-  
խան, եկան Հա-  
յաստան ու Վա-  
ղարշապատ քա-  
ղաքի մի այգու  
հնձանում ընա-  
կուեցին: Կոյսե-  
րից մինն ապակէ  
յուլունքներ էր  
շինում. ծախում  
էին և սրանով  
ապրում:

Դիոկետիանո-  
ում խիստ քարկա-  
ցաւ կոյսերի վը-  
րայ, ամեն կողմ  
մարդ ուղարկեց,

որնըանց գտնեն:  
Երբ իմացաւ, որ  
Հոփիսիմէն հա-  
յաստան է փա-  
խել, մեր Տրդատ  
թագաւորին մի  
նամակ գրեց, որի  
մէջ ասում էր.  
«Եթէ կոյսերին  
գտնես, Հոփի-  
սիմէին ինձ ու-  
ղարկիր, իսկ  
միւսներին սպա-  
նիր: Բայց եթէ  
ցանկանաս, կա-  
րող ես ամուս-  
նանալ Հոփիսի-  
մէի հետ»:



Վ. Ա.

Գայիանէ

16, ԿՈՅՍԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Տրդատն այս թուղթը ստանալուն  
պէս՝ իւր երկրի մէջ ամեն կողմ մարդ  
ուղարկեց, որ փնտռեն նրանց: Մի  
քանի օրից ետ կոյսերին գտան Վա-  
զարշապատի հնձանում: Թագաւորը  
հրամայեց հնձանը զինուորներով պա-  
տել: Երբ պատմեցին Հոփիսիմէի գե-  
ղեցկութիւնը, պալատից թանկագին  
շորեր ուղարկեց, որ հազցնեն նրան  
և իւր մօտ բերեն: Հոփիսիմէն չէր  
կամենում պալատ գնալ, բայց թա-  
գաւորը հրամայեց ուժով բերեն: Թա-  
գաւորի հրամանը կատարուեց—Հոփի-  
սիմէին քաշ տալով մինչև պալատ  
տարան: Թագաւորը տեսնելով նրա  
գեղեցկութիւնը, ուզեց ինքը նրա  
հետ ամուսնանալ, բայց Հոփիսիմէն  
չհամաձայնեց թագուհի դառնալ: Նա  
փախաւ և գնաց իւր ընկերուհիների

ԴՅԱ ԴԱԼՈՒՑ ԴՅԱ

ՏԵՇ ՏԵՇ ՏԵՇ

մօտ. պատմեց նրանց իւր գլխովն անցածը. փոքր ինչ հեռացաւ նրանցից և սկսեց Աստծուն աղօթել և շնորհակալութիւն անել, որ իրան այդպիսի վտանգից ազատեց: Այդ միջոցին թագաւորի դահիճները եկան. բռնեցին չոփսիմէին. լեզուն կտրեցին. աչքերը հանեցին և մարմինը կտորվածոր արին: Հոփսիմէից ետոյ սպանեցին նրա 35 ընկերուհիներին մայրապետի հետ միասին:

17. Ս. ԳՐԻԳՈՐԻՆ ԴՈՒՐՍ ԵՆ ԲԵՐՈՒՄ  
ՎԻՐԱՊՈՒՅ



Խոսրովադուխտ

Կոյսերին սպանել տալուց ետոյ՝ թագաւորն այս բանի վրայ շատ էր մըտածում. նրա խիղճը տանջում էր իրան. հանգիստ չունէր—բունը չէր

տանում: Նա խելագարի պէս վայրենի խոզի նման թափառում էր եղէգների մէջ: Թագաւորի քոյր Խոսրովադուխտը մի բարի աղջիկ էր: Հրեշտակը սրան երազում երևաց և ասաց. «Եթէ կամենում էք, որ թագաւորն առողջանայ, Գրիգորին պիտի վիրապից հանէք. նա միայն կարող է բժըշկել»: Խոսրովադուխտնայս երազը նախարարներին պատմեց, նրանք չհաւատացին—ամենենին չէին կարծում, թէ Գրիգորը 15 տարի Վիրապում կենդանի մնացած լինի: Երբ երեք անգամ նոյն երազը կրկնուեց, ետոյ հաւատացին: Այսուհետև Խորվիրապ գնացին, չուանը կախ արին և ձայն տուին. «Գրիգոր, եթէ կենդանի ես, դուրս արի, Աստուած հրամայեց, որ քեզ այստեղից հանենք»: Գրիգորը կենդանի էր: Նրան դուրս հանեցին և վաղարշապատ բերին: Տրդատը և նա-

խարարները Գրիգորի ոտներն էին ընկ-  
նում և ներողութիւն խնդրում։ Գրի-  
գորն աղօթեց Աստծուն, օրհնեց հի-  
ւանդ թագաւորին ու նախարարներին  
և բժշկեց նրանց։ Սրանից ետոյ փո-  
ղոցներում թափուած կոյսերի մար-  
մինները թաղել տուեց։ Տրդատը մշակի  
փոխարէն ինքն էր գերեզմանները փո-  
րում, իսկ թագուհին ու քոյրը փեշե-  
րով հողը դէն էին ածում։

Երկրորդ օրը նախարարները թա-  
գաւորի հետ Գրիգորի մօտ եկան և  
խնդրեցին, որ ճշմարիտ հաւատը սո-  
վորցնի իրանց։ Գրիգորը շատ ուրա-  
խացաւ այս բանի վրայ և 66 օր շա-  
րունակ քարողում և ուսուցանում էր  
նրանց քրիստոնէական հաւատը հըն-  
ձանի մէջ։

18. Ս. Գրիգորը ԿԱԹՈՂԻԿՈՍ է ԳԱՌ-  
-ԱՋ ՀՅԱ ԱՅՆ ԱՌԻՄ ԱԽՋԱՔ ՀԱՅԱ-  
Լ ԱՎՋԱԿ ՀԱՅԱ ԱՅ ՀԵՂՋԵՐՈՎ ՎՃԱՐ

Տրդատը, իշխանները և բազմաթիւ  
ժողովուրդը հաւատացել էին Գրիս-  
տոսին և ընդունել քրիստոնէութիւնը,  
բայց ոչ քահանայ ունէին և ոչ եպիս-  
կոպոս, որ քարոզէին, սովորցնէին և  
մկրտէին նրանց։ Այս պատճառով Տրդ-  
դատ թագաւորը Գրիգորին կեսարիա  
քաղաքն ուղարկեց, որ Ղետնդ արքե-  
պիսկոպոսից կաթողիկոս ձեռնադրուի  
և նոր քրիստոնեայ դարձած հայ ժո-  
ղովրդին մկրտի և սովորեցնի քրիս-  
տոնէութիւնը։ Գրիգորը 16 մեծամեծ  
նախարարների ուղեկցութեամբ, ար-  
քունական կառքով, թագաւորի ընծա-  
ներով ու Տրդատի թղթով կեսարիա  
գնաց։ Ղետնդը Գրիգորին կաթողիկոս  
ձեռնադրեց։ Վերադառնալիս Ս. Յով-  
հաննէս Մկրտչի և Աթանագինէ եպիս-


կոպոսի մասունքների մի մասը հետև  
առաւ, դարձաւ Հայաստան՝ Մուշ քա-  
ղաքի կողմերը։ Նա հետը բերեց և  
շատ քահանաներ, որ իրան օգնեն։

Եթե հասաւ Մուշ քաղաքը, տեսաւ  
այնտեղ շատ կուտներ՝ մեհեաններ  
կային։ Բոլորն էլ քանդեց—կուռքերի  
սեղանները՝ բագինները կործանեց,  
նրանց տեղեկեղեցի շինեց և Յովհան-  
նէս Մկրտչի մասունքն այնտեղ դրեց։  
Այս եկեղեցին սուրբ Կարապետ ա-  
նուանեց, ուր մինչև այսօր էլ անթիւ  
ուխտաւորներ են զնում։ Իւր հետ ե-  
զող 16 նախարարներին և այնտեղի  
ժողովրդին մկրտեց։ Հետը բերած քա-  
հանանների մի մասը այնտեղ թողնե-  
լով, ինքը ճանապարհ ընկալ դեպի Այ-  
րարատ։ Խոնդրի ջաւարց առ խողման  
սփյուռնաք միջորդից ցրանձ : բայր  
-խոճ . Ս սփյամարադիք : ըստիրանուն  
-սիրած չմիջամանձ և վեալլ Ս սչման

19. Ս. Գրիգորի Մկրտուի և ՏՐԴԱՏԻՆ  
ԵՒ ԼՈՒՍԱԿՈՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Տրդատը, երբ իմացաւ, որ Ս. Գրի-  
գորը Վաղարշապատ քաղաքին մօտե-  
նում է, դուրս եկաւ նրա առաջ իշ-  
խանների և ժողովրդի հետ միասին։  
Նրանք Բագաւանում պատահեցին ի-  
րար։ Այստեղ Ս. Գրիգորը քարոզեց և  
30 օր ծով և պաս պահել տուեց նր-  
անց։ Ետոյ թագաւորին, նրա ընտա-  
նիքին, իշխաններին զօրքին և անթիւ  
ժողովրդին մկրտեց Եփրատ գետի մէջ։  
Սուրբ Գրիգորը եօթն օր մնաց այն-  
տեղ և չորս միլիոնից աւելի մարդ  
մկրտեց։ Բագաւանից անթիւ մկրր-  
տուածների հետ դարձան Վաղարշա-  
պատ։

Սրանից ետոյ Ս. Գրիգորը քրիս-  
տոնէութիւնը զօրացնելու համար Տրդ-  
ատին խորհուրդ տուեց, որ Հայաս-



տանում ամեն տեղ ուսումնարաններ  
բանայ, քահանաներ պատրաստէ, որ  
մնացած հեթանոս հայ ժողովրդին քա-  
րոզեն և մկրտեն։ Ուսումնարաննե-  
րից մի քանիսում յունարէն, մի քա-  
նիսումն էլ ասորերէն էին սովորցնում,  
որովհետև դեռ ևս հայերէն գրեր չը-  
կային։ Այստեղից աւարտածները քա-  
հանաներ էին դառնում և հայերին  
հետզհետէ քրիստոնեայ դարձնում։

Բացի սրանից սուրբ Գրիգորը տասն-  
երկու եպիսկոպոս ձեռնադրեց հայե-  
րի համար։

Նա մեր երկիրը լուսաւորեց և դրա  
համար էլ նրան ասում ենք Սուրբ  
Գրիգոր Լուսաւորիչ։

Սուրբ Գրիգորը եղաւ մեր առա-  
ջին եպիսկոպոսապետը՝ հայրապետը՝  
կաթողիկոսը

Ս. Գրիգորին պատուելու համար տարին երեք  
տօն ենք կատարում—մինը Մեծ Պատի հինգերորդ  
շաբաթ օրը, իսկ երկուսը Հոգեգալըստից ետոյ։



Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՏՈՐԸ ԶԱՐԱԿԱՆԸ

Այսօր զիմանալի լրտոյն ծագողն  
ի խաւարի նստելոցն  
զֆրիգորիոս սուրբ հայրապետն և նորին  
Եկայք վերապատուեցուք:

Խաւարի մէջ նստողներիս մտաւոր լոյն տուող  
Ա. Գրիգոր հայրապետին Եկէք այսօր վերա-  
պատուենք:

Այսօր զանապական Հոգոյն պարգևն  
Բաշխող որդուոց Թորգոմայ.  
Յորդիս լրտոյ նովաւ ծնեալք,  
Եկայք վերապատուեցուք:

Եկէք այսօր պատուենք անապական հոգու  
պարգևները Թորգոմի որդիների բաշխողին, որով  
ծնուել ենք իբրև լուսոյ որդիներ:

Այսօր զաստուածային քանին պատմող  
ի Հայաստան աշխարհի  
Աշակերտեալ նմա մանկոնք.  
Եկայք վերապատուեցուք:

Հայաստան աշխարհում Աստծու խօսքը քա-  
րողողին, ով նրան աշակերտող մանուկներ, Ե-  
կէք այսօր վերապատուենք:

20. Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ՏԵՍԻԼԸ

Սուրբ Գրիգոր Լուսաւորչին մի  
անգամ տեսիլքում երևաց, որ երկին-  
քը բացուեց և սկսեց այնտեղից լոյս  
իջնել դէպի երկիրը։ Լուսի հետ միա-  
սին իջաւ Աստծու միածին որդին՝ ձե-  
ռին բռնած ոսկէ ուռն (մուրճ)։ Այս  
մարդն իջաւ Վաղարշապատ քաղաքի  
մէջ տեղը և գետնին ուռով խփեց։  
Խսկոյն գետնի տակից՝ այսինքն ան-  
դընդից սարսափելի ձայներ լսուեցին։  
Սրանից ետոյ տեսաւ թագաւորի պա-  
լատի վրայ ոսկէ խարիսխ (1), որի  
մեծութիւնը մի մեծ բլրի չափ էր։  
Այս խարսխի վրայ կրակէ սիւն կար  
(2), սիւնի վրայ՝ ամպեղէն գմբէթ  
(3) եկեղեցու գմբէթի նման, իսկ գըմ-  
բէթի վրայ էլ լուսաւոր խաչ (4)։


Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը զար-  
մացած նայում էր և չգիտէր, թէ ինչ



նշանակութիւն ունեն այս ամենը։  
Աստծու հրեշտակն իջաւ երկնքից և  
մեկնեց սուրկ Գրիգորին նրա տեսիլը։  
Հրեշտակն ասաց—նա, որ ձեռին ուկէ  
ուռն ունէր բռնած, Աստծու միածին  
որդին՝ Յիսուս Քրիստոսն էր։ Հրեղէն  
սիւնը այն տաճարն է, որ այստեղ  
պիտի շինուի, իսկ լուսաւոր խաչը՝  
հայոց կաթողիկոսութիւնն է։ Հրեշ-  
տակը յայտնեց, որ այս ուռով խփած  
տեղը եկեղեցի պիտի շինել։ Այստեղ  
պիտի աղօթեն բոլոր հայ քրիստո-  
նեաները. հայոց կաթողիկոսի աթոռն  
այնտեղ պիտի հաստատուի, այսինքն  
հայոց կաթողիկոսներն այնտեղ պի-  
տի նստեն։

21. ԷջՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Միւս օրը սուրբ Գրիգորը պատ-  
մեց այս տեսիլը Տրդատ թագաւորին,



Նախարարներին, ժողովրդին և պա-  
տուիրեց, որ հրեշտակի ցոյց տուած


տեղի չորս կողմը քարէ պատ շինեն։  
Սուրբ Գրիգորն այդ երազը տեսել  
էր թագաւորին և նրա նախարարնե-  
րին մկրտելուց առաջ։ Երբ թագաւո-  
րական տունը և ժողովրդին մկրտեց,  
Վաղարշապատ դարձաւ և Միածնի ի-  
ջած տեղում 302 թուին մի եկեղե-  
ցի շինեցին այն ձեռվ՝ ինչպէս որ տե-  
սիլը ում երեացել էր։ Այս եկեղեցին  
առաջ Կաթողիկէ՛ Շողակաթ էր կոչ-

ւում, որովհետև  
լոյսը, այսինքն  
շողը այստեղ  
կաթեց։ Այժմ  
այլ ևս Շողա-  
կաթչեն ասում,  
այլ էջմիա-  
ծին, որ նշա-  
նակում է, թէ  
այստեղ իջաւ  
Միածինը՝ Յի-



Աշխարհ


սուս Քրիստոսը։ Եկեղեցու շինու-  
թեան վրայ աշխատում էին ոչ միայն  
ժողովուրդը՝ այլև թագաւորն ինքը,  
Աշխարհին թագուհին, թագաւորի որ-



Հռիփսիմէ

դին, Խոսրովադուխտ քոյրը, նախա-  
րարներն ու իշխանները։ Բացի էջ-  
միածնից սուրբ Լուսաւորիչը երեք

Եկեղեցիներ էլ շինեց՝ մինը Գայիանէ  
կումի անունով, միւսը Հոփիսիմէի և



Դայիանէ  
սրանցում թաղեց նրանց մարմիննե-  
րը, իսկ երրորդ եկեղեցին հնձանի տե-

ղում շինեց, որն այժմ կոչւում է Շո-  
ղակաթ:

Սուրբ Էջմիածինը շինուելու օրից  
սկսած՝ բոլոր հայերի մայր եկեղե-  
ցին է: Այն տեղ է նստում հայոց  
կաթողիկոսը:

Ս. Էջմիածնի հիմնարկութիւնը մեր եկե-  
ղեցին տօնում է Հոգեգալստից Զ շաբաթ ետոյ:

### ՃԱՐԱԿԱՆ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ

Էջ Միածինն ի Հօրէ  
Եւ լոյս փառաց ընդ նմա,  
Զայնք նէչեցին  
Սանդարամետք անդնդոց:

Միածինը լուսով պատաճ իջաւ երկնքից:  
Սանդարամետից, այսինքն դժողքի անդնդից  
ձայները լսուեցան:

Տեսեալ զլոյս  
Մեծ հայրապետին Գրիգորի,  
Պատմէր ցնծովմետք  
Հաւատացեալ արքային:

Մեծ հայրապետ Գրիգորը, երբ լոյսը տեսաւ,  
ուրախ ուրախ պատմում էր նոր քրիստոնեայ  
դարձած թագաւորին:

Եկայք շինեցուք  
Սուրբ զիոնանն լուսոյ,  
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս մի և  
ի Հայաստան աշխարհի:

Եկէք այստեղ լուսոյ խորանը, այսինքն ե-  
կեղեցի շինենք, որովհետև Հայաստան աշխարհի  
մէջ այստեղ լոյս ծագեց մեզ համար:

Բարեխօսութեամբ վերին քո զօրաց  
Միշտ անշարժ պահեա զաթոռ Հայկազնեաց:

Քո վերին զօրքերի (հրեշտակների) բարե-  
խօսութիւնով միշտ անշարժ պահեր Հայկազուն-  
ների աթոռը՝ հայոց եկեղեցին՝ էջմիածինը:

22. Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ե Ա Յ Ս. Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ  
Հ Ա Ի Ա Տ Ո Յ Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Լ

Հաւատամք ի մի Աս-	Հաւատում ենք որ
տուած ի Հայրն ամենա-	կայ մի Աստուած, որ
կալ, յարարիչն երկնի և	նա ամենակալ Հայր է.

Երկրին երեկեաց և ան-  
երկութից:

Եւ ի մի տէր Յիսուս  
Քրիստոս. յՈրդին Աս-  
տուծոյ՝ ծնեալն յԱստու-  
ծոյ Հօրէ՝ միածին, այս-  
ինքն յէութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ,  
լոյս՝ ի լուսոյ Աստուած  
Ճշմարիա յԱստուծոյ ճշշ-  
մարտէ՝ ծնունդ և ոչ  
արարած: Նոյն ինքն ի-  
բնութենէ Հօր, որով ա-  
մենայն ինչ եղև յերկի-  
նըս և ի վերայ երկրի՝  
եղեւելիք և անեղեոյթք:

Որ յաղագս մեր մարդ-  
կան և վասն մերոյ փլր-  
կութեան իջեալ ի յեր-  
կնից՝ մարմնացաւ, մար-  
դացաւ. ծնաւ կատա-

երկնքի ու երկրի՝ երե-  
ւելիների և աներեոյթ-  
ների ստեղծողն է:

Հաւատում ենք որ  
Յիսուս Քրիստոսը մեր  
միակ տէրն է, որ նա  
Հայր Աստծու միածին  
որդին է, այսինքն նրա  
էութիւնիցն է:

Հաւատում ենք որ նա  
Աստուած է՝ Աստծուց.  
լոյս է՝ լուսից. ճշմարիտ  
Աստուած է, ճշմարիտ  
Աստծուց՝ ծնած է և ոչ  
թէ ստեղծուած: Հաւ-  
տում ենք, որ նա նոյն  
Հայր Աստծու բնութիւ-  
նիցն է, որով ամեն բան  
եղաւ երկնքում և եր-  
կրիս վրայ՝ թէ երկելի-  
ները և թէ աներեոյթ-  
ները:

Հաւատում ենք, որ  
մարդկանցս փրկութեան  
համար իջաւ երկնքից.  
մարմին առաւ, մարդ  
դարձաւ և ծնաւ կատա-

ըելապէս ի Մարիամայ  
Սրբոյ կուսէն Հոգւովին  
Սրբով։ Որով էառ մար-  
մին, հոգի և միտ և զա-  
մենայն որ ինչ է ի  
մարդ՝ ճշմարտապէս և  
ոչ կարծեօք։

Զարչարեալ, խաչեալ,  
թաղեալ, յերբորդ աւուր  
յարուցեալ, ելեալ ի յեր-  
կինս նովին մարմնով  
նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմ-  
նով և փառօք Հօր ի  
դատել զկենդանիս և ըգ-  
մեռեալս, որոյ թագա-  
ւորութեան ոչ գոյ վախ-  
ճան։

Հաւատամք և ի Սուրբ  
Հոգին՝ յանեղն և ի կա-  
տարեալն, որ խօսեցաւ  
յօրէնս և ի մարդարէս  
և յաւետարանս։ Որ էջն

ըեալ կերպով Սուրբ Հո-  
գով սուրբ Կոյս Մարիա-  
մից, Հաւատում ենք, որ  
Սուրբ Հոգով առաւ մար-  
մին, հոգի, միտք և այն  
ամենն՝ ինչ որ կայ մար-  
դու մէջ՝ ճշմարիտ կեր-  
պով և ոչ թէ կարծեօք։

Հաւատում ենք, որ նա  
չարչարուեց, խաչուեց,  
թաղուեց երրորդ օրը  
յարութիւն առաւ. նոյն  
մարմնով երկինք համ-  
բարձաւ ու նստաւ Հօր  
աջ կողմը։

Հաւատում ենք, որ նա  
պէտք է գայ նոյն մար-  
մնով և Հօր փառքով՝ կեն-  
դանիներին ու մեռած-  
ներին դատելու և որի  
թագաւորութիւնը ան-  
վերջ կլինի։

Հաւատում ենք նաև  
Սուրբ Հոգուն, որ նա ոչ  
ոքից չէ ստեղծուել, կա-  
տարեալ Աստուած է, որ  
խօսեց օրէնքի, մարդա-

ի Յորդանան, քարոզ-  
եաց զառաքեալն և բնա-  
կեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի-  
միայն ընդհանրական և  
առաքելական սուրբ ե-  
կեղեցի. ի մի մկրտու-  
թիւն, յապաշխարու-  
թիւն, ի քաւութիւն և ի  
թողութիւն մեղաց, ի  
յարութիւն մեռելոց, ի  
գատաստանն յաւիտե-  
նից՝ յոգւոց և մարմնոց,  
յարքայութիւն երկնից և  
ի կեանսն յաւիտենա-  
կան։

Իսկ որք ասեն՝ էր  
երբեմն յորժամ ոչ էր  
Որդի, կամ էր երբեմն  
յորժամ ոչ էր սուրբ Հո-  
գին, կամ թէ յոշէից ե-  
ղեն. կամ յայլմէ էու-  
թենէ ասեն լինել զոր-

րէների և աւետարաննե-  
րի մէջ, որ Յորդանան  
գետն իջաւ, քարոզեց  
Աստծուց ուղարկուած  
Քրիստոսի մասին և բնա-  
կուեց սրբերի մէջ։  
Հաւատամք ենք նաև  
միայն մի ընդհանրական  
և առաքելական սուրբ ե-  
կեղեցու — մի մկրտու-  
թեան, ապաշխարու-  
թեան, մեղաց քաւու-  
թեան և թողութեան,  
մեռեների յարութեան,  
հոգիների և մարմինների  
վերջին դատաստան լի-  
նելուն, երկնքի արքա-  
յութեանը և յաւիտենա-  
կան կեանքին։

Իսկ նրանք, որոնք ա-  
սում են՝ թէ կար ժա-  
մանակ, երբ ոչ Աստծու  
որդին կար և ոչ Սուրբ  
Հոգին. կամ ասում են,  
թէ Աստծու որդին կամ  
Ս. Հոգին ոչնչից գոյա-

դին Աստուծոյ և կամ ցած են և հօր Աստծու  
զսուրբ Հոգին և թէ փո- էութիւնից չեն, այլ ու-  
փոխելիք են կամ այլ- րիշ էութիւնից են եղած,  
այլելիք, զայնպիսիսն նը- կամ թէ կարող են փո-  
զովէ կաթողիկէ և առա- փոխուիլ կամ այլայլուել:  
քելական սուրբ Եկեղե- Այսպիսիներին նզովում—  
ցի:

Իսկ մեք փառաւորես-  
ցուք որ յառաջ քան ըզ-  
յաւիտեանս, երկիրպա-  
գանելով սրբոյ Երրոր-  
դութեան և միոյ Աս-  
տուածութեան Հօր և  
Որդոյ և Հոգւոյն սրբոյ,  
այժմ և միշտ յաւի-  
տեանս յաւիտենից՝ ա-  
մէն:

Իսկ մենք փառաւո-  
րում ենք յաւիտենից ա-  
ռաջ եղողին՝ երկրպագե-  
լով սուրբ Երրորդու-  
թեան և մի աստուածու-  
թեան—Հօր, Որդուն,  
Սուրբ Հոգուն՝ այժմ և  
միշտ և յաւիտեանս յա-  
տենից. ամէն:

### 23. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Մարմին տէրունական եւ արին փրկչական  
կայ առաջի. երկնային զօրովթիւնն յաներեւոյթս  
եղան եւ ասեն անհանգիստ բարբառով—Սուրբ,  
Սուրբ, Սուրբ, Տէր զօրովթեանց:

Տէրունական մարմինը, փրկչական արիւնը  
առաջներս դրած է, երկնային զօրքերն (հըեշտակ-  
ները) աներեսոյթ կերպով երգում են և ասում շա-  
րունակ—Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրովթեանց:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.  
Որ էնն Աստուած աստ քազմեցաւ,  
Խաղաղովթեան ձայն հնչեցաւ,  
Սուրբ ողջունի հրաման տուաւ:  
Եկեղեցին մի անձն եղեւ.

Համբոյրս յօղ լրման տուաւ:  
Թշնամովթիւնն հեռացաւ.  
Տէր յընդհանուրս մփոնցաւ:  
Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն՝  
Տուք օհնութիւն ի մի քերան,  
Միասնական աստուածովթեան,  
Որում սրովթէք են սրբարան:

Քրիստոս մեր մէջ յայտնուեց. Որ էն Աս-  
տուածն այստեղ (սեղանի վրայ) բազմեց. Խա-  
ղաղովթեան ձայն լսեց. սուրբ ողջունի հրաման  
տրուեց. Եկեղեցիս (բոլոր քրիստոնեաների ժո-  
ղովը) մի հոգի դարձաւ և այս ողջունի համ-  
բոյրը միութեան կապ եղաւ. Թշնամովթիւնը  
հեռացաւ. Քրիստոսի սէրն ամենիս մէջ տարած-  
ուեց. Ուրեմն, ով պաշտօնեաներ, ձայներդ

բարձրացնելով՝ միաբերան օրհնութիւն տուէք  
միասնական Աստուածութեանը, որին սրովեէ-  
ները փառաբանում են:

Դոհանամք զբէն Տէր, որ կերակրեցեր զմեզ  
յանմահական սեղանոյ քոյ՝ բաշխելով զմարմին  
եւ զարին ի փրկութիւն աշխարհի եւ կեանք ան-  
ձանց մերոց:

Շնորհակալ ենք քեզնից, ով Տէր, որ մեզ  
կերակրեցիր քո անմահական սեղանից, բաշխելով  
քո մարմինն ու արիւնը՝ աշխարհի փրկութեան  
և մեր անձին կեանք լինելու համար:

Սուրբ. Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց, լի  
են երկինք եւ երկիր փառօք քո. Օրհնութիւն ի  
բարձունս որ եկիր եւ գալոցդ ես անուամբ Տես-  
ողն: Ովսաննա ի բարձունս:

Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց, եր-  
կինքն ու երկիրը լի են քո փառքերով: Օրհնու-  
թիւն լինի բարձրումը. օրհնեալ ես, որ եկար և  
պիտի գաս Տիրոջ անունով: Ովսաննա բարձրումը:



0026580

001

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0026580

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՐՈՆԻ  
ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐԵՐԸ

### I. ԱԽԱՏՑՈՒՅՑ ՀԱՄԱՐ

ԳՐԱՆ Է ԶԵՂՋ.

#### Ստորին Հրշան

1.	Հին-ուխտի նիւթի մշակութ. մասն ա.	»	80	25
2.	Հին-ուխտի նիւթի մշակութ. մասն բ.	»	85	25
3.	Նոր-ուխտի նիւթի մշակութ. մասն ա.	1	»	35
4.	Նոր-ուխտի նիւթի մշակութ. մասն բ.	1	5	35

#### ՄԻջին Հրշան

5.	Ուսուցումն քրիստոն. կրօնի հատ. Դ.	1	50	35
6.	Ուսուցումն քրիստոն. կրօնի հատ. Ե.	»	50	35
7.	Տասն պատուիրան	»	50	35

### II. ԼԵՎԱՔՑՈՒՅՑ ՀԱՄԱՐ

8.	Դասատեար կրօնի (պատկ.) ա. տարի	»	27	25
9.	Դասատեար կրօնի . . . բ. տարի	»	25	25
10.	Դասատեար կրօնի . . . գ. տարի	»	30	20
11.	Սրբազն պատմ. հին-ուխտի (պատկ.).	»	50	25
12.	Սրբազն պատմութիւն նոր-ուխտի	»	40	20
13.	Գործք առաքելոց . . . . .	»	40	20
14.	Բարոյախօսութիւն . . . . .	»	50	25
15.	Մի քանի խօսք հայ կրօնուոյցներին	»	10	25

#### Ցանկացողները կարող են դիմել—

1. Тифлисъ—Бебутовск. ул. № 20. Прот. С. Саакянцъ,
2. " Книжная торговля „Гуттембергъ“
3. " Книжная торговля „Центральная“
4. " Дворцовая, магазинъ „Мясникова“
5. " Книжная торговля „Тараянцъ“
6. Эривань—Книжная торговля Оганесянъ

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.